ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Սիմոնյան,**

1.Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 1-ին, 4-8-րդ մասերով, ինչպես նաեւ 135-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ խնդրում ենք Ձեզ, 2022թ-ի հունիսի 29-ին, ժամը 11:00-ին գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, հետեւյալ օրակարգով՝

1) Գլխավոր դատախազի ընտրություն (318-28.06.2022-),

   «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը գլխավոր դատախազի պաշտոնում առաջադրել է Աննա Կարենի Վարդապետյանի թեկնածությունը:

2) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուի ընտրություն (305-22.06.2022-),

   (Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար ներկայացրել է Ռուբիկ Հրանտի Մխիթարյանի, Արսեն Սերժիկի Նիկողոսյանի եւ Արթուր Պարգեւի Սարգսյանի թեկնածությունները):

3) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուի ընտրություն (306-22.06.2022-),

(Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար ներկայացրել է Լուսինե Լեւոնի Աբգարյանի, Կարեն Սամվելի Բատիկյանի եւ Սերգեյ Դիմիտրիի Չիչոյանի թեկնածությունները):

4) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուի ընտրություն (307-22.06.2022-),

(Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար ներկայացրել է Հովհաննես Ռաֆիկի Ավագյանի, Կարեն Ալբերտի Բիշարյանի եւ Նելլի Նիկողոսի Հարությունյանի թեկնածությունները):

5) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուի ընտրություն (308-22.06.2022-),

(Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար ներկայացրել Լիլիթ Սոսի Գրիգորյանի, Արտակ Արտաշեսի Կրկյաշարյանի եւ Մուշեղ Պապիկի Հարությունյանի թեկնածությունները):

2. Արտահերթ նստաշրջանը նախաձեռնողների ներկայացուցիչն է Վլադիմիր Վարդանյանը:

3. Կից ներկայացնում ենք նախաձեռնողների սահմանված օրակարգով 2022 թվականի հունիսի 29-ին, ժամը 11:00-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու, գլխավոր դատախազի և վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրություն իրականացնելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին 28.06.2022թ.-ի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշումը:

| Պատգամավոր | Ստորագրություն | Հերթական համար |
|---|---|---|
| Ալեքսանյան Վահագն | | 060 |
| Աղազարյան Հովիկ | | 054 |
| Աղաջանյան Էդուարդ | | |
| Ասատրյան Մաթևոս | | |
| Այանյան Հակոբ | | 057 |
| Արշակյան Հակոբ | | |
| Արսենյան Գուրգեն | | |
| Բաբայան Նարեկ | | 055 |
| Բագրատյան Սերգեյ | | 037 |
| Բադալյան Լուսինե | | |
| Բաթոյան Զարուհի | | |
| Բաքոյան Ռուստամ | | 069 |
| Գաբրիելյան Միսակ | | 031 |
| Գաբրիելյան Վիլեն | | 029 |
| Գալստյան Մերի | | |
| Գասպարյան Տաթևիկ | | |
| Գրիգորյան Հռիփսիմե | | |
| Գրիգորյան Նարեկ | | 059 |
| Դանիելյան Դավիթ | | |
| Դավթյան Արթուր | | |
| Դավոյան Արփինե | | |
| Եղիազարյան Գայանե | | 053 |
| Եղոյան Արման | | |
| Զեյնալյան Նարեկ | | |
| Թորոսյան Արսեն | | 005 |
| Թորոսյան Շիրակ | | |

| | | |
|---|---|---|
| Թումասյան Միքայել | | 006 |
| Թունյան Բաբկեն | | |
| Խաչատրյան Արմեն | | 032 |
| Խաչատրյան Վիգեն | | |
| Խանդանյան Սարգիս | | 066 |
| Կարապետյան Մարիա | | |
| Կիրակոսյան Լիլիթ | | 045 |
| Կոնջորյան Հայկ | | 012 |
| Հակոբյան Էդգար | | |
| Հակոբյան Համիկ | | 060 |
| Հակոբյան Հրայր | | 039 |
| Հակոբյան Վաղարշակ | | 034 |
| Հասանով Կնյազ | | 081 |
| Համբարձումյան Կարեն | | 028 |
| Հովակիմյան Վահագն | | |
| Հովհաննիսյան Արթուր | | 052 |
| Հունանյան Հռիփսիմե | | 067. |
| Ղազարյան Ալիսա | | |
| Ղազարյան Թագուհի | | |
| Ղազարյան Մարինա | | 050 |
| Ղազարյան Սոնա | | |
| Ղալումյան Վահե | | 042 |
| Ղահրամանյան Նարեկ | | 062 |
| Մանավազյան Արուսյակ | | 036 |
| Մելքոնյան Գուրգեն | | 009 |
| Մինասյան Լիլիթ | | |

| | | |
|---|---|---|
| Մկրտչյան Արեն | | 049 |
| Նազարյան Լենա | | 002 |
| Պալյան Էմմա | | 056 |
| Պապոյան Գևորգ | | 021 |
| Պողոսյան Մարիամ | | 064 |
| Պողոսյան Քրիստինե | | 044 |
| Ջուլհակյան Արուսյակ | | 013 |
| Ռուբինյան Ռուբեն | | |
| Սանդիկով Ալեքսեյ | | 070 |
| Սարգսյան Հայկ | | 035 |
| Սարգսյան Տրդատ | | |
| Սիմոնյան Ալեն | | |
| Ստեփանյան Լիլիթ | | |
| Սուքիասյան Խաչատուր | | |
| Վարդանյան Ծովինար | | 019 |
| Վարդանյան Վլադիմիր | | |
| Տիգրանյան Հերիքնազ | | 011 |
| Ցիրունյան Հայկ | | |
| Քոչարյան Անդրանիկ | | 015 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

---

## ՈՐՈՇՈՒՄԸ

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ,ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ

## ԳՈՒՄԱՐԵԼՈՒ, ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022թ.-ի հունիսի 29-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նստաշրջան գումարելու, գլխավոր դատախազի և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրություն իրականացնելու վերաբերյալ:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2022թ.-ի սեպտեմբերի 15-ին լրանում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի լիազորությունների ժամկետը: Առաջնորդվելով Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ և 145-րդ հոդվածներով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը գլխավոր դատախազի պաշտոնում թեկնածու է առաջադրել Աննա Կարենի Վարդապետյանին: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը գլխավոր դատախազի պաշտոնում 28.09.2022թ.-ին Ազգային ժողովին է առաջարկել Աննա Կարենի Վարդապետյանի թեկնածությունը:

25.02.2022թ.-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքը, որի 3-րդ հոդվածով ՀՀ վճռաբեկ դատարանում ստեղծվել են վարչական և հակակոռուպցիոն պալատներ: Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունմամբ, ինչն իր հերթին բխում էր Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը ապահովելու, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքով սահմնված նորմերը կիրառելու և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջնորդվելով՝ անհրաժեշտություն է առաջացել գումարել արտահերթ նստաշրջան և իրականացնել ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուների ընտրությունը:

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**28.06.2022թ.**